ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

29 հուլիսի 2011 թվականի N 84-Ա

ք. Հրազդան

Մ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 164-րդ հոդվածի 1-ին մասով՝

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության <<Արագյուղի առողջության առաջնային պահպանման կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության տնօրեն ***Մարինե Մարտիրոսյանին*** տրամադրել 2011 թվականի իր ամենամյա նվազագույն արձակուրդը՝ 2011 թվականի օգոստոսի 2-ից մինչև 2011 թվականի օգոստոսի 26-ը ներառյալ՝ 20 աշխատանքային օր:

Հիմք՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2010 թվականի դեկտեմբերի 27-ի N 541 որոշմամբ հաստատված ժամանակացույցը:

2. ***Մարինե Մարտիրոսյանի*** արձակուրդում գտնվելու ընթացքում Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության <<Արագյուղի առողջության առաջնային պահպանման կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության տնօրենի պարտականությունների կատարումը ժամանակավորապես դնել ընկերության հաշվապահ ***Սուսաննա Սահակյանի***, իսկ բնակչության բժշկական սպասարկումը՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի <<Բուշականի բժշկական ամբուլատորիա>> պետական փակ բաժնետիրական ընկերության ընտանեկան բժիշկ ***Անուշավան Միքայելյանի*** վրա (համաձայնությամբ):

3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ